ԹԵՄԱ 1. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՈՒՏՔԸ ՆՈՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ. ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ ՓՈԽՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԸ

§ 4. ԳԻՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ՆՈՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՏԱՐԱԾՈՒՄԸ

1

– Ֆրանսիացիների համար լավագույն վառոդը պատրաստում է Լավուազիեն: Դա վնասում է մեր նավատորմի գործողություններին: Պետք է այս խնդիրը լուծել: Անհրաժեշտ է Լավուազիեին վերացնել, ցանկալի է դա անել ֆրանսիացիների ձեռքով,– ասաց Անգլիայի վարչապետ Փիթը:

* * *

– Լավ վառոդ պատրաստելու համար բազմաթիվ քիմիական նյութեր են անհրաժեշտ: Դրանք թանկ արժեն, իսկ կառավարությունը ինձ չի ֆինանսավորում: Ես ստիպված եմ շուկայական սպեկուլյացիայով փող աշխատել անհրաժեշտ նյութերը գնելու համար,– ասում էր Լավուազիեն իր օգնականին:

* * *

– Ես չեմ հավատում մատնություններին որ Լավուազեն դավաճան է: Բայց, որ զբաղվում է սպեկուլյացիայով, ճշմարիտ է: Ժողովուրդը պետք է տեսնի, որ մենք պայքարում ենք սպեկուլյանտների դեմ: Լավուազիեին պետք է պատժել,– ասաց Ֆրանսիայի հեղափոխության ղեկավար Ռոբեսպիերը:

* * *

– Եվ Ֆրանսիայի լավագույն քիմիկոսին մահապատժի ենթարկեցին որպես սպեկուլյանտի: